«ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ» ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

ԴԱՎԻԹ ՍԱՖԱՐՅԱՆ

Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի այցը Հայաստան և «ֆուտբոլային դիվանագիտություն» անվանումը ստացած գործընթացը (2008-2011 թթ.) լայնորեն լուսաբանվել են աշխարհի տարբեր երկրների, հատկապես հայաստանյան և թուրքական ԶԼՄ-ներում: Ստորև կփորձենք ներկայացնել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման կողմնակիցների և հակառակորդների տեսակետները թուրքական առավել «խոսուն» հրապարակումներից մի քանիսում:

Ուշագրավ է թուրքական պատմական ընկերության նախկին նախագահ Յուսուֆ Հալաչօղլուի՝ «Հուրիյեթ» ազդեցիկ թերթին տված հարցազրույցը, որտեղ փորձ էր արվում առաջ մղել այսպես կոչված «1915 թ. իրադարձությունների ուսումնասիրության համար հայ և թուրք պատմաբանների համատեղ հանձնաժողով ստեղծելու» մասին այն ժամանակ Թուրքիայի վարչապետի պաշտոնը զբաղեցնող Էրդողանի գաղափարը: Հալաչօղլուն մասնավորապես ասել էր. «Բոստոնի ՀՅԴ կենտրոնական արխիվը բացելու համար անհատույց 20 մլն դոլար առաջարկեցի, սակայն ոչ ոք տեղից չշարժվեց»[1]: «Թարաֆը», «Էվրենսելը», «Ենի Ակթուելը» և թուրքական այլ ԶՄԼ-ներ իսկույն արձագանքեցին Հալաչօղլուի «նետած մարտահրավերին»[2]: Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի՝ Հայաստան այցի նախօրեին Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի փորձագետ Յըլդըզ Դևեջին փորձեց խեղաթյուրել հայաստանյան ղեկավարության տեսակետներն այսպես կոչված «պատմաբանների հանձնաժողովի» վերաբերյալ[3]: «Թարաֆ»-ը գրում էր. «Երանի թե հրավերն ընդունի մեր նախագահը, որը դեռևս արտգործնախարարի կարգավիճակում հակված էր արևելյան հարևանի հետ մերձեցման...»[4]: Հաջորդ օրը «Հուրիյեթ»-ը ձայնակցեց. «Անկարան հրավերին դրական է մոտենում: Թեև դիվա-

[1] **Kaplan S.**, Parasını verelim arşivleri açın, 19.05.2008, http://www.hurriyet.com.tr/gundem/8978383.asp

[2] Մասնավորապես տե՛ս **Hür A.**, Taşnak arşivini bırak, Osmanlı arşivine bak, 25.05.2008, http://arsiv.taraf.com.tr/yazilar/ayse-hur/tasnak-arsivini-birak-osmanli-arsivine-bak/728/

[3] Տե՛ս **Deveci Y.**, Türkiye-Ermenistan maçi iki ülke arasinda yeni bir bailangic olabilir mi?, 27. 06.2008, http://www.eraren.org/index.php?Lisan=tr&Page=Makaleler&MakaleNo=3147

[4] "Taraf", 27.06.2008.

նագիտական աղբյուրները նշում են, որ դեռևս պաշտոնական հրավեր չեն ստացել, սակայն մոտեցումը հրավերին բացասական չէ»[5]: Պաշտոնաթող դեսպան Օմեր Էնգին Լյութեմը «Անադոլու» գործակալության հարցին պատասխանել էր. «Սերժ Սարգսյանը մեկ քարով երկու թռչուն է խփում: Եթե հրավերը հաջողությամբ պսակվի, նա երկրի ներսում կթուլացնի լարվածությունը: Անհաջողության դեպքում էլ այսպիսի նախաձեռնություն ցուցաբերելու համար հեղինակություն ձեռք կբերի... Չեմ կարծում, որ թուրք հասարակությունը վատ ընդունի ֆուտբոլային հանդիպումը դիտելու համար Գյուլի Երևան գնալը... Հրավերի ընդունման դեպքում Թուրքիան աշխարհում համակրանք ձեռք կբերի, նրան կողջունեն տարբեր երկրներ… Հայաստանի հետ հաշտվելը չի ենթադրում հաշտվել նաև սփյուռքի հետ, եթե համաձայնության գալու լինենք, սփյուռքը դեռ երկար ժամանակ համառորեն շարունակելու է սև քարոզչությունը Թուրքիայի դեմ…»[6]: Թուրք-հայկական հարաբերությունների կարգավորման ակտիվ կողմնակից, ճանաչված գործարար Քաան Սոյաքը պնդում էր. «Գյուլն անպայման պետք է գնա Հայաստան»[7]: Այցի հակառակորդների տեսակետները «բյուրեղացրած» նախկին արտգործնախարար Իլթեր Թուրքմենը նշել է. «Չեմ կարծում, թե նախագահ Գյուլը կգնա Հայաստան…. Հայտնի չէ, թե հրավերի ընդունումն ինչ նպաստ կբերի երկու երկրների միջև առկա հարցերի կարգավորմանը, քանի որ մենք այդ երկրի հետ չունենք դիվանագիտական հարաբերություններ, իսկ մեր սահմանները փակ են... Եթե ես լինեի, չէի գնա»[8]: Թուրքական մամուլն ուշադրություն էր դարձնում այն հանգամանքին, որ Գյուլի այցը Հայաստան կվնասի թուրք-ադրբեջանական ռազմավարական հարաբերություններին: «Զամանը» գրում էր, որ «դեպի Երևան Գյուլի ճանապարհն անցնելու է Բաքվով»[9]: «Հուրիյեթում» ներկայացվում էր «Ազգայնական շարժում» կուսակցությունից Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատգամավոր Օքթայ Վուրալի ծայրահեղ բացասական դիրքորոշումը Գյուլի Երևան այցի հարցում. «Թուրքիան կարիք չունի Ադրբեջանին միայնակ թողնելու և մի օկուպանտ երկրի կողքին գտնվելու…. Նախագահը թող չգնա, ֆուտբոլային հանդիպումը թող դիտի հեռուստատեսությամբ: Եթե հեռուստացույց չունի, կուղարկենք»[10]: Թուրքիայի Հանրապետական ժո-

---

[5] **Ergan U.**, Erivan-Ankara arası buzlar giderek eriyor, 28.06.2008, http://www.hurriyet.com.tr/gundem/9297587.asp

[6] "Gül, Erivan'ın maç davetini kabul ederse...", 18.07.2008, http://tabdc.org/gul-erivanin-mac-davetini-kabul-ederse/

[7] Նույն տեղում:

[8] Նույն տեղում:

[9] **Kurt S.**, Gül'ün Erivan yolu Bakü'den geçecek, 30.07.2008, http://www.zaman.com.tr/dunya_gulun-erivan-yolu-bakuden-gececek_720081.html

[10] "MHP'den Gül'e "Maçı televizyondan izle" önerisi", 01.09.2008, http://www.hurriyet.com.tr/gundem/9795769.asp

ղովրդական կուսակցության առաջնորդ Դենիզ Բայքալը Գյուլի և Էրդողանի գործողությունները Երևան այցի նախօրեին բացեիբաց «դավաճանություն» է որակել. «Այն, ինչ անում է Էրդողանի կառավարությունը՝ ցավալի է: Թող իմ ադրբեջանցի եղբայրներն իմանան, որ ագրեսիվ Հայաստանի հետ հարաբերությունների հաստատումը թուրք ժողովրդի ցանկությունը չէ: Ես ներողություն եմ խնդրում իմ ադրբեջանցի եղբայրներից՝ Գյուլի և Էրդողանի դավաճանության համար... Մենք եղբայրներ ենք, և ես մինչև հիմա չեմ հասկանում, թե ինչպես կարող էինք այսպես վարվել... Ժողովուրդը դա նրանց չի ների: Այս օրերին ես հազարավոր նամակներ եմ ստացել մեր հայրենակիցներից. նրանք ադրբեջանական ժողովրդի հետ են և իրենց եղբայրներին չեն դավաճանում… Թուրք և ադրբեջանցի ժողովուրդները, ինչպես նաև ամբողջ թյուրքական աշխարհը երբեք չեն ների այդ դավաճանությունը: Ես կարծում եմ, որ թուրք ժողովուրդն իր միանշանակ գնահատականը պետք է տա Էրդողանի ու Գյուլի գործողություններին: Այդ կառավարությունը հեռացրել է մեզանից մեր կիպրոսցի եղբայրներին ու հիմա նույնը անում է մեր ադրբեջանցի եղբայրների հետ»[11]:

Թուրքական ԶԼՄ-ներում ուշագրավ անդրադարձներով հանդես եկավ քաղաքական մեկնաբան Մեհմեդ Ալի Բիրանդը. «Գյուլը, ֆուտբոլային հանդիպմանը գնալով, ճիշտ քայլ կատարեց» հրապարակման մեջ նա հավանություն էր տալիս այդ այցին: Բիրանդը գրում էր. «Բազմիցս գնացել եմ Երևան այն տարիներին, երբ ուրիշները չէին կարող գնալ: Շատ լավ գիտեմ, թե որն է հայաստանյան հասարակական կարծիքը և ինչ զգացմունքներ կան Թուրքիայի հանդեպ: Գրեթե բոլորն իրավացիորեն կամ անիրավ կերպով, ուղեղների լվացման կամ էլ իրենց ընտանիքներից լսած իրական պատմությունների պատճառով ատում են մեզ: Սակայն վստահ եղեք՝ ոչ միայն սփյուռքում ապրողները, այլև Հայաստանում բնակվող հայերի զգալի մասն էլ այնպիսի վիճակում է, որ հոգնել է Թուրքիայի պես դևի դեմ կռվելուց: Նրանք հավատում են ցեղասպանությանը, և անհնար է փոխել նրանց համոզմունքն այս հարցում: Այսուհանդերձ, առանց փոխելու իրենց տեսակետները՝ նրանք ցանկանում են հունի մեջ գցել հարաբերությունները Թուրքիայի հետ, բարձրացնել իրենց կյանքի որակը: Հայաստանում իշխանության եկած նոր ղեկավարությունն էլ ցանկանում է այս կամ այն ձևով կարգավորել հարաբերությունները Թուրքիայի հետ՝ առանց ցեղասպանության գաղափարից հրաժարվելու, և Թուրքիայի միջոցով ավելի ազատորեն ինտեգրվել Եվրոպային ու կարգավորել տնտեսությունը»[12]:

---

[11] Տե՛ս «Последствия «футбольной дипломатии» могут оказаться неожиданными», 03.09.08, www.echo-az.info, տե՛ս և հմմտ. նաև՝ **Çelik M.**, Baykal'dan Gül'e Erivan tepkisi, 05.09.2008, http://www.milliyet.com.tr/Siyaset/HaberDetay.aspx?aType=HaberDetay&Kategori=siyaset&KategoriID=&ArticleID=987062&Date=05.09.2008&b=Baykal,%20Gulu%20kizdirdi

[12] **Birand M. A.**, Gül, maça gitmekle doğru adım attı..., 05.09.2008, http://www.hurriyet.com.tr/yazarlar/9824710.asp

Բիրանդը, արձանագրելով, որ թե՛ Թուրքիայում և թե՛ Հայաստանում կան ուժեր, որոնք կողմ են երկու երկրների միջև լարվածության պահպանմանը, հանգում է եզրակացության, որ Գյուլի այցելությամբ կարող է «մի տաբու քանդվել»[13]:

Երևանից վերադառնալով Անկարա՝ Թուրքիայի նախագահը լրագրողներին ասել էր. «Գնդակը մեր դաշտում էր և չպետք է այնտեղ մնար: Այս այցով դրական նկարագիր ստեղծեցինք, դրական վարկանիշ ձեռք բերեցինք աշխարհում: Իմ այս այցը դրվատանքի է արժանանալու և դիտվելու է իբրև հանդգնության դրսևորում: Թուրքիայի համար անարդար է բացասական վարկանիշ ունենալը, իսկ ես մեծ կարևորություն եմ տալիս Թուրքիայի վարկանիշին»[14]: Ըստ «Զաման» թերթի՝ Գյուլը, անդրադառնալով սահմանները բացելու հարցին, ասել էր. «Եթե այս մթնոլորտը պահպանվի, ապա ամեն ինչ կմտնի հունի մեջ, կկանոնավորվի, սակայն ներկա պահին նման հարց չկա»[15]:

«Գյուլը մի տաբու քանդեց» հոդվածում Մ. Ա. Բիրանդը նկարագրել է Թուրքիայի նախագահի այցը Երևան և «ֆուտբոլային դիվանագիտությանն» ուղեկցող իրադարձությունները: Հայաստանի և հայ հասարակության նկատմամբ դրական տոնայնությամբ հրապարակման մեջ նա կարևորում էր նոր երկխոսության գործընթացի սկիզբը, թուրքական պատվիրակության մնալը Երևանում և «ճանապարհային քարտեզի» կազմումը, հետագա բարձր մակարդակի հանդիպումների ծրագրումը, Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցում նախապայմաններից հրաժարվելու՝ Անկարայի որոշակի քայլերը: Բիրանդը միաժամանակ նշում էր, որ թուրք-հայկական հարաբերություններում զգալի է արտաքին ուժերի ազդեցությունը, հնարավոր են նոր ճգնաժամեր. «Եթե հրապարակը մոլեռանդներին թողնեն, ապա այս գործից ոչինչ դուրս չի գա: Կրկին շնորհակալություն Գյուլին և Սարգսյանին՝ այս տաբուն քանդելու համար»[16]:

Թուրք հայտնի դիվանագետ, պաշտոնաթող դեսպան Վոլքան Վուրալը «Թարաֆին» տված հարցազրույցում պնդում էր, որ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը կարող է դրականորեն անդրադառնալ Թուրքիայի վարկանիշի վրա, էապես բարելավել տարածաշրջանային անվտանգությունն ու կայունությունը, ինչում շահագրգիռ են Թուրքիան և Հայաստանը, նաև երրորդ երկրները (մասնավորապես Ադրբեջանը)[17]: Բիրանդի՝ ազդեցիկ թերթերում, այլ պար-

---

[13] Նույն տեղում:

[14] "Gül'ün Erivan ziyareti dünya basınında", 07.09.2008, http://www.cnnturk.com/2008/dunya/09/07/gulun.erivan.ziyareti.dunya.basininda/492734.0/index.html

[15] "Gül: Ziyaretim faydalı geçti", 07.09.2008, http://www.zaman.com.tr/politika_gul-ziyaretim-faydali-gecti_735261.html

[16] **Birand M. A.**, Gül, bir tabu yıktı..., 09.09.2008, http://www.hurriyet.com.tr/yazarlar/9851895.asp

[17] Տե՛ս **Düzel N.**, Volkan Vural: "Ermeni ve Rumlar tekrar vatandaş olsun", 08.09.2008, http://arsiv.taraf.com.tr/yazilar/nese-duzel/volkan-vural-ermeni-ve-rumlar-tekrar-vatandas/1841/

բերականներում հրապարակումները բազմաթիվ արձագանքներ ունեցան, քանի որ առանձնանում էին Հայաստանի հետ հարաբերությունները առանց նախապայմանների կարգավորելու հնարավորությունն օգտագործելու զգուշավոր դիրքորոշմամբ:

Ադրբեջանական շրջանակների խիստ բացասական արձագանքին անդրադառնալով՝ «Միլլիյեթի» լրագրող Սամիհ Իդիզը գրում էր. «Միջազգային հարաբերությունները փոփոխական են, ուստի կառավարությունները պետք է զինված լինեն երկրի շահերին համապատասխան նոր քաղաքականություն մշակելու կարողություններով: Արդեն տապալված է «Ղարաբաղն անհրաժեշտության դեպքում պատերազմով վերցնելու» Ադրբեջանի մոտեցումը: Պատճառն ակնհայտ է՝ այդ բանը նրան թույլ չի տալիս Հայաստանի թիկունքին կանգնած Ռուսաստանը»[18]:

Մի քանի օր անց Բասքըն Օրանը, հիշեցնելով Հյուսիսային Կիպրոսի հարցում Ադրբեջանի՝ Թուրքիայից տարբերվող մոտեցումը, գրում էր. «Եթե մտածում եք «փոխհատուցում կուզեն (հայերը-Դ.Ս.), հող կպահանջեն և կվերադառնան ապահովագրական ընկերությունները», ասեմ…. «չե՞ն ուզելու…»: Եթե կա փոխհատուցում վճարելու իրավական անհրաժեշտություն, ո՞րն է լավը՝ վճարե՞լը, թե՞ «չենք վճարում» ասելով հոխորտալը, եթե չկա, ապա ինչո՞ւ ենք անհանգստանում: ...Եթե նկատի ունենք ՀՀ Անկախության հռչակագիրը՝ ասելով. «Հայերն աչք ունեն մեր հողերի վրա, որտեղ Արևելյան Անատոլիան որպես Արևմտյան Հայաստան են ներկայացնում», նշեմ, որ խնդրո առարկա հռչակագիրն ընդունվել էր 1990 թ. օգոստոսի 23-ին, այսինքն՝ նախքան ԽՍՀՄ փլուզումը, իսկ 1991 թ. սեպտեմբերի 23-ի հռչակագրում Արևմտահայաստան արտահայտությունը չի օգտագործվել: Ի վերջո, պետք է ընդունել, որ ոչ մի իրավիճակ չի կարող ավելի վատ լինել, քան Թուրքիայի ներկայիս իրավիճակը, որին ցեղասպանություն իրագործելու մեղադրանքով ներկայումս նսեմացնում է ողջ աշխարհը: Ժամանակն է հասկանալու, որ Հայկական հարցը ո՛չ հողի, ո՛չ էլ փոխհատուցման հարց է, այլ՝ մեր ողջ ազգի հոգեբանության: Իսկ հոգեբանությունը սնուցում են այն հաստատություններն ու անհատները, որոնք, պաշտպանության տակ առնելով իթթիհադական մարդասպաններին, անամոթաբար հայտարարում են. «Մենք ոչ ոքի չենք սպանել, հայերը մեզ սպանեցին»»[19]:

Արժանահիշատակ է, որ 2008 թ. «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) արտաքին քաղաքականության կարևորագույն նկատված դրսևորումներից մեկը դարձավ Կովկասում անվտանգության և համագործակցության պլատֆորմի առաջադրումը: «Զրո հիմնախնդիր հարևանների հետ» և «ռիթմիկ դիվանագիտություն» համա-

[18] “Milliyet”, 08.09.2008.
[19] “Radikal”, 14.09.2008.

դրույթի շրջանակներում նախատեսվում էր նաև տարածաշրջանային «նոր ձևաչափ». վարչապետ Էրդողանը 2008 թ. օգոստոսի 12-ին նշել է, որ Թուրքիան կփորձի ձևավորել «Կովկասյան ալյանս»՝ Բալկանների նմանությամբ, որտեղ կլինի նաև Ռուսաստանը[20]: Թուրք հետազոտողները հիշեցնում էին, որ Կովկասում անվտանգության և համագործակցության պլատֆորմը կարող էր դիտվել իբրև Սուլեյման Դեմիրելի առաջադրած՝ Կովկասում կայունության դաշնագրի թարմացված տարբերակ[21]:

2009 թ. Ցյուրիխում ստորագրված արձանագրություններն արտահայտում էին առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և հայ-թուրքական սահմանը վերաբացելու մասին կողմերի հանձնառությունը, այսուհանդերձ հայտնվեցին սուր քննադատության թիրախում: Ըստ թուրքական լրատվամիջոցների՝ արձանագրությունները ստորագրել պատրաստ էին դեռևս 2009 թ. ապրիլին, սակայն Էրդողանը հայտարարել էր. «ՄԱԿ-ը պետք է զորքերը Լեռնային Ղարաբաղից դուրս բերելու կոչ անի Հայաստանին: Պետք է առաջնահերթ լուծում ստանա Ադրբեջանի հետ Հայաստանի վեճը, որից հետո կկարգավորվեն նաև հայ-թուրքական հարաբերությունները»: «Ֆայնենշլ թայմսում» լույս տեսած Ա. Գյուլի հարցազրույցում էլ նշվում էր, որ Կովկասում գլխավոր խնդիրը ղարաբաղյան հիմնահարցն է[22]: Ըստ թուրքագետ Հակոբ Չաքրյանի՝ Թուրքիայի նախագահը փորձում էր հակակշռել վարչապետի՝ Ադրբեջանի կարծր դիրքորոշումները սանձելու նպատակով արված հայտարարությունները[23]: Հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումից հետո Թուրքիայի խորհրդարանում բուռն քննարկումներ տեղի ունեցան: Արտգործնախարար Ա. Դավութօղլուն փորձում էր հիմնավորել, որ համապատասխան ենթահանձնաժողովը քննարկելու է Հայոց ցեղասպանության հարցը: Սակայն ընդդիմադիր Ժողովրդահանրապետական և «Ազգայնական շարժում» կուսակցությունները պնդում էին, որ ենթահանձնաժողովի գործառույթը Դավութօղլուի ներկայացրածը չէ, և որ Հայոց ցեղասպանության հարցն այդ հարթակում չի քննարկվելու: Հետաքրքիր էր ընդդիմադիր քրդական «Ժողովրդավարական հասարակություն» կուսակցության պատգամավոր Սելահեթթին Դեմիրթաշի ելույթը:

---

[20] Տե՛ս «Erdogan'in «Istikrar Platformu» Onerisine Saakasvili'den Destek», Referans, 15.18.2008, էջ 15:

[21] Մանրամասն տե՛ս **Челикпала М.** Турция и Южный Кавказ, Ежегодник института Кавказа, Ер., 2011, էջ 176, 178-179, **Babacan A.**, Calming the Caucasus, International Herald Tribune, September 23, 2008, ինչպես նաև **Դ. Սաֆարյան**, **Գ. Մելիքյան**, **Վ. Ոսկանյան**, **Ալ. Սաֆարյան**, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը Թուրքիայի հասարակական-քաղաքական դիսկուրսում, Եր., ԵՊՀ հրատ., 2017, էջ 107-110:

[22] Տե՛ս «Interview transcript: Abdullah Gul», «Financial Times», 08.04.2009, http://www.ft.com/intl/cms/s/0/47991556-2446-11de-9a01-00144feabdc0.html

[23] Տե՛ս **Հ. Չաքրյան**, Հայկական սահմանի հարցում Թուրքիան կանգնել է երկընտրանքի առջև, «Ազգ», 08.04.2009:

Խորհրդարանական ամբիոնից նա արեց ուշագրավ հայտարարություններ՝ արժանանալով իշխող ԱԶԿ-ի, ինչպես նաև ընդդիմադիր ԺՀԿ-ի, ԱՇԿ-ի կոշտ քննադատությանը: Ըստ Դեմիրթաշի. «Հայ-թուրքական հարաբերություններում կա հարյուր տարվա վաղեմության մի պատմական խնդիր: 1915-1916 թթ. այդ ժամանակվա երիտթուրք վարչախմբի կողմից Անատոլիան թուրքացնելու, իսլամացնելու նպատակով պարբերաբար կիրառվել է ոչ մուսուլմանների ոչնչացման քաղաքականություն... Այդ ժամանակ հայ ժողովրդի հանդեպ կատարվածն ընդհանրապես տեղ չի գտել պատմության գրքերում, կրթության նախարարության հրատարակած դասագրքերում, ասես դրանք տեղի չեն ունեցել»[24]:

Ինչպես հայտնի է, հայկական կողմի դիրքորոշումն այն էր, որ արձանագրությունները նախ պետք է վավերացնի Թուրքիայի խորհրդարանը կամ երկու երկրների խորհրդարանները վավերացնեն միաժամանակ: Սակայն ադրբեջանական աճող ճնշումների և Թուրքիայում իշխող ԱԶԿ-ի հանդեպ ընդդիմադիր ուժերի հարձակումների պայմաններում Թուրքիայի քաղաքական ղեկավարներն առաջ էին տանում այն գիծը, որ խորհրդարանը քաղաքական ինքնուրույն մարմին է, որտեղ յուրաքանչյուր պատգամավոր ունի սեփական դիրքորոշումը: Ավելին, 2009 թ. հոկտեմբերի 15-ին Եվրամիությանն անդամակցության հարցերով Թուրքիայի բանագնաց Էգեմեն Բաղըշը հայ լրագրողների հետ զրույցում ասել էր. «Շատ բարդ կլինի Թուրքիայի խորհրդարանից ակնկալել հայ-թուրքական երկու արձանագրությունների վավերացումը, քանի դեռ Ղարաբաղի հարցում չկա նկատելի առաջընթաց»[25]:

Նախապայմաններ առաջադրելու հարցում պահպանողական դիրքորոշում դրսևորեցին հիմնահարցով զբաղվող թուրք մի շարք վերլուծաբաններ: Խորհրդային Միության փլուզումից և Թուրքիայի Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետության անկախությունը ճանաչելուց հետո Թուրքիայում իշխանության եկած բոլոր (Սուլեյման Դեմիրելի, Թանսու Չիլերի, Մեսութ Յըլմազի, Նեջմեթթին Էրբաքանի, Բյուլենթ Էջևիթի, Ռեջեփ Թայիփ Էրդողանի) կառավարությունները Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման «զգայուն կետը» մշտապես համարել են թուրք-ադրբեջանական հարաբերությունները. թուրք քաղաքական վերնախավի և գիտական ու լրագրողական ընտրանու ներկայացուցիչների զգալի մասը կրում էր Հայաստանին նախապայմաններ առաջադրող հայտարարությունների և հրապարակումների զգալի «բեռ», ինչն ակնհայտորեն հնարավոր չէր արագ թոթափել անգամ բարձր իշխանությունների կողմից ուղղորդվող որոշակի գործողությունների ու մոտեցումների պարագայում: Թուրքիայի քաղաքական ընդդիմությունն էլ Հայաստանի հետ հարաբերությունն-

[24] **Ռ. Մելքոնյան**, Հայոց ցեղասպանության խնդիրը Թուրքիայի խորհրդարանում, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6144:

[25] **Bağiş E.**, Ermenistan'dan gelen gazetecileri kabul etti, http://egemenbagis.com/tr/1123

րի հնարավոր կարգավորման «զգայուն» հարցը հնարավորինս շահարկում էր իշխանություններին քննադատելու համար: Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու դեմ մտայնության ցայտուն օրինակ էր Սեդաթ Լաչինների՝ «Հայաստանը կարող է ճանաչել Թուրքիայի սահմանները» հրապարակումը, որտեղ ձևակերպվում է «այն գինը», որը Հայաստանը պետք է վճարի Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու, երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհները բացելու համար: Հեղինակը վստահ էր, որ Հայաստանի ղեկավարներից հարկ է ակնկալել հստակ հայտարարություն Թուրքիայի հետ պետական սահմանը ճանաչելու մասին, ինչը նա, միանգամայն հնարավոր էր համարում: Դրանից հետո ճանապարհների վերաբացման համար ժամանակ կպահանջվի, որի ընթացքում Հայաստանը պետք է կատարեր այլ քայլեր, հատկապես զորքերը դուրս բերեր «օկուպացված տարածքներից»[26]: Թուրքական հասարակական-քաղաքական խոսույթում զգալի էր «ադրբեջանական գործոնը»: Արձանագրությունների ստորագրումը և դրան հաջորդած հայաստանյան ու թուրքական քաղաքական գործիչների հայտարարությունները նույնպես մշտապես եղել են թուրքական ԶԼՄ-ների և վերլուծաբանների ուշադրության կենտրոնում: Հայաստանի նկատմամբ վարվող քաղաքականության «զգայուն» հարցում նախապայմաններից հրաժարվելու մեջ մեղադրվող, ինչպես նաև Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հովանավորների առջև պատասխանատվություն ստանձնած Թուրքիայի ղեկավարները չէին կարող չանել հայտարարություններ՝ մեղմելու սեփական հանրային տրամադրությունները, բայց, միևնույնն է, նրանց անկեղծությունը կրկին կասկածի տակ էր դրվում թուրքական ընդդիմության և ադրբեջանամետ վերլուծաբանների կողմից[27]: Արձանագրությունների՝ Թուրքիայի և Հայաստանի խորհրդարաններ մտնելուց անմիջապես հետո Թուրքիայում սկսվեց քննարկվել դրանց վավերացման հնարավորությունը[28]: Թուրքիայի խորհրդարանում մեծամասնություն կազմող ԱԶԿ գործիչները, ի պատասխան ընդդիմության հարձակումների, սկսեցին հայտարարել, որ Հայաստանի առջև պայման են դնելու: Պայմանը (վավերացման ժամանակ արվելիք վերապահումը) ըստ երևույթին վերաբերելու էր Լեռնա-

---

[26] Տե՛ս **Laçiner S.**, Ermenistan, Türkıye'nın Sınırlarını Tanıyabilır, http://www.usak.org.tr/analiz_det.php?id=1&cat=365365889#.VTtRrvl_sbY, նույն տեղում տե՛ս ու հմմտ. նաև՝ **Laçiner S.**, Türkıye, Gürcistan ve Azerbaican'ı Demıryoluyla Bağlamak, 24.07.2008, ինչպես նաև նույն հեղինակի՝ **Laçiner S.**, Ermenistan-Türkiye İlişkilerinde Sınır Kapısı Sorunu ve Ekonomik Boyut, http://www.eraren.org/index.php?Page=DergiIcerik&IcerikNo=154:

[27] Տե՛ս «Տասը հարց, տասը պատասխան»/Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման ու երկկողմ հարաբերությունների զարգացման մասին արձանագրություններ (պատ. խմբ.՝ պրոֆ. Ա. Սիմոնյան), Եր., 2009, էջ 18-20:

[28] Մասնավորապես տե՛ս **Mercan M.**, «Protokolün kilit noktası», 15.01.2010, http://www.cumhuriyet.com.tr/haber/diger/112864/Protokolun_kilit_noktasi_Azerbaycan_.html

յին Ղարաբաղի հիմնահարցում Հայաստանից զիջումներ կորզելուն: Թե ինչ էր ակնկալում թուրքական հասարակական-քաղաքական կարծիքը «Ղարաբաղյան բանակցություններում առաջընթաց» ասելով՝ կարելի է հասկանալ թուրքական և ադրբեջանական լրատվամիջոցների հրապարակումներից: Ակնկալիքը ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափով բանակցություններում Հայաստանից խոստում և գործնական քայլեր կորզելն էր. խոսքը նախկին ԼՂԻՄ սահմաններից դուրս՝ այսպես կոչված «գրավյալ տարածքներից» հայկական զինված ուժերը դուրս բերելու և այդ տարածքներն Ադրբեջանի գերակայությանը վերադարձնելու մասին էր[29]:

Թուրքիայի ԱԳՆ ռազմավարական հետազոտությունների կենտրոնի տնօրեն Բյուլենթ Արասը գտնում էր. «Նախկին աշխարհագրական տեսլականը հիմնված էր ազգային պետության գաղափարի վրա... Տարածաշրջանային հռետորաբանությունը կառուցված էր այն պատկերացման վրա, որ հայրենիքը մշտապես վտանգի մեջ է և շրջապատված է թշնամիներով: Այս խոսույթն օգնում էր քաղաքական գործիչներին ստեղծելու հայրենիքի պաշտպանության անհրաժեշտության պատկերացում՝ դրանով համախմբելու բնակչությանը և պահպանելու իրենց իշխանությունը... Սակայն այդ տարիներին երկրի աշխարհագրական ընկալումը փոխվեց: Քաղաքագետների գիտակցության մեջ վերացան տարածքային սահմանափակումները.... Ներքին անվտանգությունը սկսեց կապվել տարածաշրջանային անվտանգության հետ.... Թուրքիան հարևան երկրներն այժմ դիտում էր որպես նոր հնարավորությունների ոլորտ, որտեղ ինքը տարածաշրջանային քաղաքացիական և տնտեսական տերության դեր ունի»[30]: Բ. Արասը անդրադարձել էր հայ-թուրքական աշխուժացած շփումներին. «Թուրքական քաղաքական գործիչների մեջ նկատվում է Հայաստանի հանդեպ վերաբերմունքի էական փափկացում... 2008 թ. դեկտեմբերին թուրք մտավորականության ներկայացուցիչների 200 հոգանոց խումբը նամակ հրապարակեց՝ ներողություն խնդրելով «Մեծ Աղետի համար, որին ենթարկվել են Օսմանյան կայսրության հայերը 1915 թ.»[31]: Թուրքիայի նախագահ Ա. Գյուլն այդ նամակը համարեց նոր հնարավորություն՝ երկրում սկսելու բանավեճ թուրքական պատմության այդ էջի շուրջ: Թուրք ԱԳՆ հայտարարությունը նման էր Գյուլի արձագանքին. ընդգծվում էր այլընտրանքային կարծիքների հնարավորությունը ժողովրդավարական հասարակության մեջ[32]: Բ. Արասը հանգել էր եզրակացության, որ ստատուս քվոն տարածաշրջանում պետք է փոխվի,

---

[29] Մասնավորապես տե՛ս և հմմտ. **Laçiner S.**, Bir Ermeni Tasarısı Hiç Bu Kadar İşe Yaramamıştı, 10.03.2010, http://www.usak.org.tr/print.php?id=1135&z=2

[30] **Арас Б.** Турция и Южный Кавказ в 2008г., Ежегодник института Кавказа, Ер., 2010, с. 169.

[31] Նույն տեղում:

[32] Տե՛ս նույն տեղը, էջ 174-175, նաև **Berkan I.**, Kisisel Bir Sey, «Radikal», 19.12. 2008, «Kampanya Acik Toplumun Gostergesi», «Taraf», 18.12.2008, **Candar C.**, Genelkurmay, Sivil ve Ermeni Tabusu…, «Radikal», 20.12.2008:

տարածաշրջանային կարգը պետք է հիմնված լինի նոր հռետորաբանության, տնտեսական անկախության պրակտիկայի, քաղաքական համագործակցության, կայունության ու բարգավաճման վրա[33]:

Թուրք վերլուծաբան Այբարս Գորգուլուն, կարևորելով կարգավորման փորձը, հայ-թուրքական հարաբերությունների պատմությունը որակելով «հավերժական փակուղի», արձանագրությունները չվավերացնելու մեղքը կանխավ բարդում էր հայկական կողմի վրա. «Վավերացման գործընթացի դադարեցումից հետո հայ-թուրքական հարաբերությունները կրկին մտան փակուղի…. Եթե Հայաստանը և Թուրքիան ցանկանան շարունակել կարգավորել հարաբերությունները, նրանց հարկ կլինի ստեղծել դիվանագիտական նոր գործիքներ»[34]:

Ցյուրիխյան արձանագրությունների վավերացումը նախապայմաններով (վերապահումներով) պայմանավորելու քաղաքականությանը զուգահեռ՝ թուրքական ԶԼՄ-ներում իշխող էր այն թեզը, որ վավերացման կասեցման և կարգավորման գործընթացը սառեցնելու «մեղավորը» ոչ թե Թուրքիան է, այլ Հայաստանը: Փաստ է, որ «ֆուտբոլային դիվանագիտության» ծավալման շրջանում թուրքական լրատվամիջոցները Հայաստանի և հայ-թուրքական հարաբերությունների մասին խոսել են ավելի շատ, քան երբևէ նախկինում: Ակնհայտ է նաև թուրքական ԶԼՄ-ների որոշ հրապարակումների՝ Հայաստանի և Սփյուռքի, ներհայաստանյան հասարակական-քաղաքական շրջանակների միջև «սեպեր խրելու» միտումը: Միաժամանակ թուրքական ԶԼՄ-ների բազմամյա մշտադիտարկումը թույլ է տալիս եզրակացնել, որ թեև թուրքական քաղաքական վերնախավում հրապարակային բախում եղավ Հայաստանի հետ հարաբերությունները բարելավելու կողմնակիցների և հակառակորդների միջև, այսուհանդերձ դեռևս գերակայելու են «եղբայրական Ադրբեջանի» հետ հարաբերությունները առաջնային համարողների, Հայոց ցեղասպանության ճանաչմանը հակազդելուն միտված քաղաքական ռեսուրսի համախմբման օգտին հանդես եկողների դիրքերը, թուրքական իշխանությունները սուր քննադատության են ենթարկվելու է՛լ ավելի ադրբեջանամետ ներկայանալ ցանկացող ընդդիմության թևերի կողմից, իսկ ցյուրիխյան այդքան չարչրկված արձանագրություններն իրականում չունեն խորհրդարանական վավերացման և ոչ մի հեռանկար:

Բանալի բառեր – *Հայ-թուրքական հարաբերություններ, թուրքական հասարակական-քաղաքական խոսույթ, թուրքական ԶԼՄ-ների մշտադիտարկում, ցյուրիխյան արձանագրություններ*

---

[33] Տե՛ս **Арас Б.**, նշվ. աշխ., էջ 180:

[34] **Горгулу А.** Турция и Южный Кавказ, Ежегодник института Кавказа, Ер., 2012, с. 144, 148-149, տե՛ս նաև **Gorgulu A.**, **Iskandaryan A.** and **Minasyan S.**,Turkey-Armenia Dialogue Series: Assessing the Rapprochement Process. TESEV Foreign Policy Analysis Series. – Istanbul: TESEV Publications, 2010, էջ 18:

ДАВИД САФАРЯН – *Отголоски "Футбольной дипломатии" в турецкой прессе.* – Общественность Турции чутко реагировала на шаги руководства правящей партии "Справедливость и развитие" в рамках "футбольной дипломатии". С одной стороны, пока действовала эта инициатива (2008–2011 гг.), турецкая пресса писала об Армении и вопросе нормализации отношений с ней больше, чем когда-либо, но с другой стороны, турецкое общество оказалось не готово нормализовать двусторонние отношения без предварительных условий. По сути, оно стало заложником доминирующих в Азербайджане политических настроений. Если и были в эти и последующие годы отдельные сторонники нормализации отношений с Арменией, их голос был гораздо слабее, чем голос тех, кто требовал увязать армяно-турецкую нормализацию с нагорно-карабахским урегулированием и предусловиями.

Ключевые слова: *Армяно-турецкие отношения, турецкая общественно-политическая речь, мониторинг турецких СМИ, Цюрихские протоколы*

DAVIT SAFARYAN – *Responce to "Football Diplomacy" in the Turkish Press.* – The political and public opinion of Turkey reacted sensitively to the steps taken by the leadership of the ruling Justice and Development Party in Turkey to promote Football Diplomacy. On the one hand in the course of Football Diplomacy (2008-2011) the Turkish press had been writing about Armenia and the issue of normalizing relations with it most of all, but on the other hand, it was obvious that the Turkish socio-political opinion was not ready to normalize relations with Armenia without any pre-conditions, remaining hostage to the political moods dominating in Azerbaijan. It is worth noting that even though there were individual supporters of normalizing relations with Armenia in Turkey of the period in question or later on, their voice was much weaker than the voice of the supporters of linking the normalization process with the Nagorno-Karabakh settlement and its staging in front of Armenia as a precondition.

Key words: *Armenian-Turkish relations, Turkish socio-political discourse, Turkish media monitoring, Zurich protocols*.